СОНА ГРИГОРЯН

ГРУЗИЯ. ТУРИЗМ КАК КЛЮЧЕВОЕ НАПРАВЛЕНИЕ ЭКОНОМИКИ

Ключевые слова: *туризм, туристические записи, гостиничный бизнес, прибытие, стратегии, инвестиции.*

Сегодня индустрия туризма с ее инфраструктурой играет важную роль в экономике многих стран. В статье представлены роль и значение туризма в Грузии, проанализированы меры для развития туризма и повышения качества предоставляемых услуг, связанных с туризмом. Обсуждаются основные шаги, предпринятые Грузией для развития туризма.

SONA GRIGORYAN

GEORGIA. TOURISM AS A KEY DIRECTION OF THE ECONOMY

Key words: *tourism, tourist entries, hotel industry, arrivals, strategies, investments.*

Today The tourism industry and its infrastructure play an important role in the economy of many countries. The article presents the role and importance of tourism in Georgia, where have been analyzed the dynamics of tourism development and the results of quality improvement strategy of tourism related services. The main steps in the development of tourism in Georgia are discussed.

ՄԱՐԻԵՏԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Բնօգտագործման տնտեսագիտություն, բակալավրիատ, 4-րդ կուրս

ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *էկոզբոսաշրջություն (էկոտուրիզմ), էկոգյուղ, կայուն զարգացում, կանաչ ապրելակերպ, ռեկրեացիոն ռեսուրսներ, երկրորդային ռեսուրսօգտագործում*

Հայաստանն իր առաջին քայլերն է անում զբոսաշրջության ասպարեզում՝ ունենալով այդ ոլորտը զարգացնելու համար բոլոր նախադրյալները՝ հարմար աշխարհագրական դիրք, յուրահատուկ բնություն, պատմամշակութային ավանդույթներ, տեսարժան վայրեր, աշխատուժի ցածր ինքնարժեք, ակտիվ սփյուռք:

Էկոզբոսաշրջության (էկոտուրիզմ) առաջացումն ու զարգացումը պայմանավորված է շրջակա միջավայրի վրա մարդու բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու ձգտմամբ, որի հիմքում կայուն զարգացման գաղափարախոսությունն է:

Վերջին տասնամյակներում ստեղծված սոցիալական և տնտեսական անբարենպաստ պայմանները հանգեցրել են բնական պաշարների անխնա, երբեմն անմիտ օգտագործմանը, որն էլ իր հերթին բնական համակարգերի ընդհանուր վիճակի վրա անուղղելի հետևանքներ կարող է ունենալ: Դրա հետ մեկտեղ, տնտեսության զարգացմանը զուգընթաց ավելանում են սոցիալական և տնտեսական հիմնախնդիրները, ահաբեկչությունները և շրջակա մի-

ջավայրի աղտոտվածությունը, որի հետևանքով առաջանում են կյանքի որակի պահպանության հետ կապված հիմնահարցեր: Այս ամենը հաշվի առնելով մարդիկ ձգտում են իրենց հանգիստը կազմակերպել էկոլոգիապես մաքուր միջավայրում, իսկ զանգվածային տուրիզմի հետևանքով բնական և պատմամշակութային ռեսուրսների վրա ներգործությունը առավել մեծանում է:

20-րդ դարի կեսից ի վեր զբոսաշրջությունը դարձել է տնտեսության ամենակարևոր հատվածներից մեկը, և կան բոլոր նախապայմաններն ապագայում էլ ավելի մեծ կարևորություն ձեռք բերելու համար: Դրան զուգահեռ աշխարհում անընդհատ ավելանում է բնության և գյուղական միջավայրի հետ կապված զբոսաշրջությունը, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ) այցելելու պահանջարկը: Զբոսաշրջիկների կողմից ներկայացվող պահանջները վերաբերում են ոչ միայն հարմարավետությանը և մատուցվող ծառայությունների որակին, այլև ինտերակտիվ, ռեկրեացիոն հանգիստ կազմակերպելուն: Նման հանգիստը ներառում է շփում տեղի բնակչության հետ, ծանոթություն ինքնատիպ մշակույթին, բնությանը՝ բուսական և կենդանական աշխարհին, տվյալ տարածքի պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրում, ինչպես նաև դրանց պահպանության վերաբերյալ գիտելիքների ձեռք բերում:

Շրջակա միջավայրի վրա մարդու բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու ձգտմամբ է պայմանավորված էկոզբոսաշրջության առաջացումն ու վերընթաց ուղին, որի հիմքում կայուն զարգացման գաղափարախոսությունն է: Էկոզբոսաշրջության զարգացումը խթանեց տուրիստական գործակալությունների աշխատանքը՝ հաճախորդների պահանջմունքները նոր և անկրկնելի տպավորություններով բավարարելու, բնության պահպանմանը նպաստելու առումով: Ճիշտ զարգացման դեպքում այն կարող է կարևոր դեր կատարել ժամանակակից սոցիալական և տնտեսական ճգնաժամի հաղթահարման գործում, ինչպես նաև, հատկապես զարգացող երկրներում, զգալի եկամուտ բերել պետբյուջե:

Էկոզբոսաշրջության տեսակներից են էկոգյուղերը, որոնք փոքրիկ միավորումներ են՝ շրջակա միջավայրի պահպանության ընդհանուր արժեքներով և նպատակաուղղվածությամբ: Էկոգյուղերում կարևոր առանձնահատկությունն այն է, որ հավասարապես են գնահատվում մարդկային կյանքը և կյանքի այլ ձևերը: Ընդ որում, մարդը չի փորձում տիրել բնությանը, այլ ավելի շուտ զբաղեցնում է իր օրինական տեղը բնության մեջ: Մեկ այլ կարևոր սկզբունք է բնական ռեսուրսների ցիկլային օգտագործումը, այլ ոչ թե բնատարր, բնաքայքայող գործունեությունը, որը բնորոշ է զբոսաշրջության այլ ձևերին: Էկոգյուղերում օգտագործում են այլընտրանքային էներգիա (արևի, կենսագազ), կարևորվում է երկրորդային ռեսուրսօգտագործումը, թափոնների վերամշակումը, օրգանական պարարտանյութերի օգտագործումը: Էկոգյուղերի հիմնական և կարևորագույն խնդիրներից է կենսաբազմազանության պահպանությունը և տեղի բնակչության համար «կանաչ» ապրելակերպը եկամտի աղբյուր դարձնելը: Էկոզբոսաշրջության զարգացումն այդ նպատակին հասնելու ամենաարդյունավետ միջոցներից է:



Գծապատկեր 1. ***Էկոզբոսաշրջության ոլորտում ներդրումը, ԵԱՏՄ երկրներ, %***[1]

Էկոզբոսաշրջությունը ԵԱՏՄ երկրներում զարգացման նոր թափ է առել: Վերջին տարիներին այս ոլորտում ներդրումներն ավելացել են, օրինակ՝ Հայաստանում՝ 14%-ով, Ղազախստանում՝ 6.2%-ով, Ռուսաստանում՝ 5%-ով, Բելառուսում՝ 5.9%-ով:

Ընդհանուր կողմնորոշման համար էկոլոգիական տուրերի բազմազանության մեջ ներկայացնենք հետևյալ աղյուսակը, որը հիմնված է բնության տարածքային կազմակերպման առանձնահատկությունների վրա[2]:

Աղյուսակ 1

Էկոտուրերի հիմնական տեսակները և նպատակները

Էկոտուրի տեսակը	*Հիմնական նպատակները*
գիտական և ճանաչողական	բուսաբանական, թռչնաբանական, լանդշաֆտաաշխարհագրական, հնագիտական և այլ հետազոտություններ
արկածային	հետիոտն, ջրային, ձիով, լեռնային շրջագայություններ
ամառային ուսանողական (աշակերտական) փորձառություն	ճանաչողական, նախադիպլոմային, արտադրական և այլ
ամառային ճամբարներ և ծրագրեր սովորողների համար	հնագիտական, աշխարհագրական, բուսաբանական, կենդանական և այլ
ուղևորություն հանգստյան օրերին	էքսկուրսիաներ
ներքին կամ միջազգային	այցելություններ հարազատներին և ընկերներին, ուղևորություններ էկոլոգիական սիմպոզիումների, գիտաժողովների, գործուղումներ
գյուղական	գյուղմթերքի համտեսում, գյուղական միջավայր և առօրյա

Էկոզբոսաշրջիկները զարգացած երկրներից հիմնականում ուղևորվում են զարգացող երկրներ՝ տեղաբաշխված առավելապես արևադարձային գոտիներում, որտեղ բնությունը էկզոտիկ և հրապուրիչ է: Առաջատարներ են համարվում Քենիան, Տանզանիան, Էկվադորը, Կոստա-Ռիկան, Նեպալը, Կարիբյան շրջանների և Օվկիանիայի երկրները: Զարգացած երկրների մեջ պետք է նշել Ավստրալիան, Նոր Զելանդիան: Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում զարգացած է ներքին զբոսաշրջությունը, ակտիվ են այցելությունները բնության տարածքներ և գյուղական բնակավայրեր:

[1] Տվյալները ըստ՝ http://www.armstat.am/am/?nid=546

[2] Տե՛ս Косолапов А.Б., Теория и практика экологического туризма, М., 2015 г., Храбовченко В.В., Экологический туризм, М., 2014 г.:



Գծապատկեր 2. ***Զբոսաշրջային այցելությունների քանակի աճը*** *2010-2016 թթ.*[1]

Հայաստանն իր առաջին քայլերն է անում զբոսաշրջության, մասնավորապես՝ էկոգյուղ զբոսաշրջության ասպարեզում՝ այդ ոլորտը զարգացնելու համար ունենալով բոլոր նախադրյալները՝ հարմար աշխարհագրական դիրք, յուրահատուկ բնություն, պատմամշակութային ավանդույթներ, տեսարժան վայրեր, աշխատուժի ցածր ինքնարժեք, ակտիվ սփյուռք:

2015 թ. ներգնա զբոսաշրջային այցելությունները Հայաստան կազմել են շուրջ 1192120՝ 1.0%-ով պակաս, քան 2014 թ.: 2015 թ. ընթացքում ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի նվազումը հիմնականում պայմանավորված է եղել Ռուսաստանի Դաշնությունից և Վրաստանից այցելությունների նվազմամբ՝ համապատասխանաբար 6 և 11%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել տարածաշրջանային տնտեսական և քաղաքական խնդիրներով:

ՀՀ-ում Կայուն զարգացման քաղաքականություն որդեգրելուց հետո էկոգյուղերի ստեղծման առաջին քայլերը կատարվել են Գեղարքունիքի մարզի Կալավան համայնքի երիտասարդների նախաձեռնությամբ և համայնքապետարանի աջակցությամբ՝ մշակելով համայնքի համակողմանի զարգացման երկարաժամկետ հայեցակարգային ծրագիրը (2015-2025 թթ.[2]), որը նպատակ ունի նպաստել զբոսաշրջության զարգացմանը, բարելավել բնակչության սոցիալական պայմանները, ստեղծելով նոր աշխատատեղեր՝ նվազեցնել բնակչության արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակը, պաշտպանել համայնքաբնակների շահերը: Իսկ այդ նպատակների իրագործումը խթանում է համայնքում զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացումը: Հիմնական շեշտը դրվում է էկոզբոսաշրջության զարգացման վրա, նպատակը Կալավանը էկոգյուղ դարձնելն է: Այս ուղղության զարգացումը խթանելու համար առավել մեծ ուշադրություն է դարձվում օրգանական գյուղատնտեսությանը, վերականգնվող էներգետիկային, ինչպես նաև ապագայում նախատեսվում են մի շարք այլ ծրագրեր:

---

[1] http://stcarmenia.am/ - Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն:

[2] Տե՛ս Կալավանի զարգացման ծրագիր (2015-2025 թթ.):

Նշենք նաև, որ 2014 թվականից «Արցախի երիտասարդության զարգացման կենտրոն» ՀԿ-ն Լեռնային Ղարաբաղի Խնձրիստան, Պատարա և Աստղաշեն գյուղական համայնքներում իրականացնում է «Էկոխնձրիստան էկոգյուղերի ցանցի էկոտուրիզմի զարգացում» ծրագիրը[1]:

Հայաստանի համայնքների տարածքը բարենպաստ է էկոգյուղ զբոսաշրջության զարգացման համար: Քանի որ գյուղերի հիմնական խնդիրներից է աշխատատեղերի բացակայությունը և հատկապես երիտասարդության զբաղվածության հարցը, ապա զբոսաշրջության խթանումը համայնքներում կարող է նոր եկամուտների և ապրուստի միջոցների աղբյուր դառնալ:

Ամբողջ աշխարհում զբոսաշրջությունը բացասական ազդեցություն է ունենում շրջակա միջավայրի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա: Այս խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է հատուկ պահպանվող տարածքներում իրականացնել արդյունավետ բնապահպանական քաղաքականություն: Իսկ էկոգյուղի զարգացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք սոցիալական և տնտեսական, էկոլոգաաշխարհագրական, ծրագրահետախուզական բնույթի խնդիրներ:

Հայաստանում առկա են զբոսաշրջության զարգացման հարուստ ռեսուրսներ, որոնք միջազգային ասպարեզում մեծ պահանջարկ ունեն, սակայն հանքարդյունաբերական ոլորտի զարգացումը բացասաբար է ազդում Հայաստանի բնառեսուրսային ներուժի վրա: Այս դեպքում անհրաժեշտ է զսպել նոր հանքավայրերի շահագործումը: ՀՀ Կառավարությունը պետք է պահպանի շրջակա միջավայրի բարձր որակը՝ մասնավորապես էկոգյուղ զբոսաշրջության զարգացման համար ստեղծելով կապիտալ ներդրումների նպաստավոր պայմաններ: Քանի որ, էկոզբոսաշրջությունը պետք է դառնա Հայաստանի համայնքների կայուն զարգացման քաղաքականության հիմնական ոլորտներից մեկը, ապա երկարաժամկետ ծրագրերը պետք է ընդգրկեն կայուն զարգացման քաղաքականություն՝ բարենպաստ պայմանների ստեղծմամբ:

МАРИЕТА ДАНИЕЛЯН

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ЭКОТУРИЗМА В АРМЕНИИ

Клучевые слова: *экотуризм, экодеревня, устойчивое развитие, “зеленый” образ жизни, рекреационные ресурсы, использование вторичных ресурсов.*

Армения делает первые шаги в области туризма, имея все предпосылки для развития этой сферы: удобное географическое положение, уникальную природу, культурные традиции, достопримечательности, активную диаспору.

Появление и развитие экотуризма обусловленно стремлением минимализировать воздействие человека на окружающую среду. Основой развития экотуризма является идеология устойчивого развития.

[1] Տե՛ս Հայաստանի երիտասարդական հիմնադրամ- http://heh.am/?module=article&utility=show_article&id_article=2199:

MARIETA DANIELYAN

PERSPECTIVES OF ECOTOURISM DEVELOPMENT IN ARMENIA

Key words: *ecotourism, eco-village, sustainable development, green lifestyle, recreational resources, use of secondary resources.*

Armenia takes the first steps in the field of tourism, having all the prerequisites for the development of this sphere: convenient geographical position, unique nature, cultural traditions, attractions, active diaspora.

The emergence and development of ecotourism is conditioned by the desire to minimize the human impact on the environment. The basis for the development of ecotourism is a stable development ideology.

ԱՆԻ ԴԱՎԹՅԱՆ
Աշխատանքի և աշխատավարձի կազմակերպումը ծառայությունների ոլորտում, մագիստրատուրա, 1-ին կուրս

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *կենսաթոշակային համակարգ, կենսաթոշակային բարեփոխումներ, կենսաթոշակային տարիք, բեռնվածության գործակից, փոխհատուցման գործակից*

Հոդվածում դիտարկվել են ԵՄ և ԱՊՀ երկրների կենսաթոշակային բարեփոխումների առանձնահատկությունները, կենսաթոշակային համակարգի հիմնախնդիրները, ուսումնասիրվել է բնակչության սեռատարիքային կազմը, ներկայացվել են բեռնվածության և փոխհատուցման գործակիցները ԱՊՀ երկրներում և միջին կենսաթոշակի ու միջին աշխատավարձի հարաբերակցությունը եվրոպական երկրներում, վերլուծվել են MMGPI-ը և Global AgeWatch Index-ը և այս ամենի արդյունքում կատարվել են եզրակացություններ և ներկայացվել են առաջարկություններ:

Մինչև 20-րդ դարի վերջը գրեթե բոլոր երկրներում արդյունավետորեն գործում էր կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման «մայրցամաքային» կամ «բիսմարկյան» մոդելը, սակայն բնակչության կենսաթոշակային ապահովման ոլորտում սկսեցին ի հայտ գալ բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝ բավական ինչեղություն ստացան կենսաթոշակային միջոցների կառավարման ու վերահսկողության հիմնախնդիրները: Ներկայումս ԱՊՀ և Եվրոպական միության երկրներում չեն դադարում քննարկումները միգրացիայի, գործազրկության, թաքնված զբաղվածության աճի, կենսաթոշակային համակարգերի զարգացման հնարավորությունների վերաբերյալ: Յուրաքանչյուր երկրում իրականացվում են կենսաթոշակային բարեփոխումներ, որոնց արդյունքում կենսաթոշակային համակարգերը վերակազմավորվում են պարամետրիկ կամ արմատական բարեփոխումների տեսքով: Հետազոտության նպատակն է իրականացնել ԱՊՀ և ԵՄ երկրների կենսաթոշակա-